եւ 'ի սին ժամանակի անկեալ էր վանքն Ս. Յակոբայ 'ի ներքոյ բազմագումար տոկոսաւոր պարտուց 'ի դառնութենէ ժամանակին. ստացուածք վանաց՝ անօթք և սպասք եկեղեցւոյ՝ եղեալ 'ի գրաւի։ Փոյթ կալաւ Գրիգոր մեծաւ աշխատութեամբ և խոհեմութեամբ թեթեւացուցանել զպարտս Աթոռոյն. և խոհական տնտեսութեամբ տնօրինել զամենայն ինչ։ Իբրեւ ետես Պետրոս Կաթուղիկոս զանխոնջ ջանս եւ զհաւատարիմ աշխատութիւնս նորին. հաճութեամբ Դաւթի Արք եպիսկոպոսի եւ Պատրիարքի քաղաքին Երուսաղէմի և գլխաւորացն Հայոց. ձեռնադրեաց զնա 'ի սարկաւագ. և յանձն արարին նմա զամենայն հոգս աթոռոյն. եւ նորա յօժարութեամբ յանձն առեալ անձանձիր պարապէր 'ի գործս աթոռոյն, տարեալ բազմադիմի վշտաց և նեղութեանց։ Գրեաց թուղթս և կոնդակս յարեւելս յաշխարհն Հայոց, և յայլ դառաս, առ եպիսկոպոսունս և վարդապետս եւ առ իշխանաւորս ազգին՝ և յորդորական բանիւք շարժեաց զմիտս նոցա 'ի սէր տնօրինական Ս. Տեղեաց Քրիստոսի։ Եւ նոքա սկսան դալ բազմութեամբ յամենայն կողմանց՝ լի արդեամբք. բերելով նուէր զպէսպէս անօթս եկեղեցւոյ և զձեռագիր մատեանս, յորոց միջի նշանաւոր են ժողովուրդք Լեհաստանի նուիրօք և յիշատակօք. եւ Գրիգոր արդեամբք նոցին հատոյց զամենայն պարտս Աթոռոյն՝ եւ ազատեաց զգրաւն. և սկիզբն արար շինութեան և նորոգութեան վիճակին Հայոց։

Ապա ձեռնադրեցին զնա վարդապետ (1610)։ Տեսեալ գլխաւորաց ազգին զփոյթ և զհաւատարիմ ծառայութիւն ժրաջան մշակին՝ 'ի պայծառութիւն Աթոռոյն Երուսաղէմի՝ ետուն ձեռնադրել զնա Արք եպիսկոպոս և Պատրիարք Երուսաղէմի, զկնի մահուան Դաւթի։ Զայս ամենայն զոր գրեցաք սակաւուք, գտանի 'ի պատմութեան նորին Գրիգորի, գրեալ 'ի մագաղաթի. և 'ի յիշատակարանի ձեռագիր Յայսմաւուրի՝ Գրիգորի Ծերենց. գրեալ (1638) նորին հրամանաւ։ Իսկ զայլ գործս Գրիգորի, քաղեմք 'ի դատաստանական գրոց։

Ոմանք յայլազգեաց Երուսաղէմի՝ թշնամացեալ ընդ միաբանս Հայոց. 'ի գիշերի այրեցին հրով զարտաքին դուռն